ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԸ

Գ. Ս. ՍԱՐԳԻՍՈՎ

Հանցանք կատարելով, տվյալ անձնավորությունը որոշակի հոգեկան վերաբերմունք է դրսևորում՝ ինչպես իր արարքի (գործողության կամ անգործության), այնպես էլ դրա հանրայնորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ։ Չկա և չի էլ կարող լինել այնպիսի հանցագործություն, որի դեպքում հանցանք կատարողը չդրսևորի իր վերաբերմունքը կատարվածի նկատմամբ։ Հոգեկան այդ վերաբերմունքը իրավագիտության մեջ ընդունված է անվանել մեղք, որը, ինչպես հայտնի է, ունի երկու ձև՝ դիտավորություն և անզգուշություն։

Օրենսդիրը հանցագործությունը համարում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է դրա հանրության համար վտանգավոր հետևանքները և ցանկացել է դրանք կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը (քրեական օրենսդիրք, հոդված 8)։

Քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն, հանցագործությունը համարվում է անզգուշաբար կատարված, եթե այն կատարող անձը նախատեսել է իր գործողության կամ անգործության հանրայնորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու դրանք, կամ չի նախատեսել այդպիսի հետևանքներն առաջանալու հնարավորությունը, թեև պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք։

Խուլիգանական արարք թույլ տալու դեպքում սուբյեկտը նույնպես որոշակի հոգեկան վերաբերմունք է ցույց տալիս ինչպես իր գործողություններին, այնպես էլ դրանց հանրայնորեն վտանգավոր հետևանքներին՝ հասարակական կարգի կոպիտ խախտմանը, արտահայտելով իր բացահայտ արհամարհանքը հասարակության նկատմամբ։

Ինչպիսի՞ն է այդ հոգեկան վերաբերմունքը։ Սովորաբար գտնում են, որ խուլիգանական արարքը կարող է կատարվել միայն դիտավորությամբ։ Քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածը, որը ելնում է հրամանագրի 9-րդ հոդվածից, հենց այդպես է բնորոշում խուլիգանությունը՝ «դիտավորյալ գործողություններ»։

Այն կարծիքը, որ խուլիգանությունը սուբյեկտիվ կողմից դիտավորյալ արարք է, արտահայտվել է միութենական հանրապետությունների գործող քրեական օրենսգրքերը ընդունելուց դեռ շատ առաջ, այսինքն նախքան այն, երբ օրենսդիրը հրաժարվել է խուլիգանությունը բնութագրել իբրև «անպատկառ», «աննպատակ» գործողություն։ Այսպես, խուլիգանության ժամանակ թույլ տրված հանցանքի դիտավորյալ ձևը մատնանշում էր Ն. Վ. Կռիլենկոն դեռ 1926 թ.։ Նշված թվականի հոկտեմբերի 29-ին զեկուցումով հանդես գալով Լենինգրադի քաղսովետի ներքին կառավարման և ժողովրդական կրթության սեկցիաների պլենումների միացյալ նիստում, Ն. Վ. Կռիլենկոն (այն ժամանակ նա ՌՍՖՍՀ հանրապետական դատախազի ավագ օգնական էր և ՌՍՖՍՀ արդարադատության ժողկոմի տեղակալը), ասաց. «...մեր օրենքը տալիս է խուլիգանության ստակ բնորոշումը... իբրև «հասարակության շահերին հետ առնչված անպատկառ գործողություններ»։ Քրեական օրենսգրքի առաջին խմբագրության մեջ կային նաև «աննպատակ գործողություն» բառերը, բայց հաջորդ խմբագրության մեջ մենք այդ «աննպատակ» բառը դուրս նետեցինք, քանի որ, իհարկե, չի կարելի ասել, թե խուլիգանությունը ոչ մի նպատակ չունի։ Եթե խուլիգանը կոտրում է լապտերը, շուռ է տալիս ուղեսյունը, վերցնում է տակառով ջուրը և այն լցնում ծխնելույզը, ապա այս գործողությունները թերևս որոշակի նպատակ ունեն. նա ցանկանում է հենց լապտերը կոտրել, ցանկանում է հենց ուղեսյունը շուռ տալ, այլ ոչ թե մի ինչ-որ այլ բան։ Այս նկատառումներով «աննպատակ» բառը մենք դուրս նետեցինք»[1]։

Այն մասին, որ խուլիգանությունը սուբյեկտիվ կողմից բնորոշվում է իբրև դիտավորություն, ասել է նաև սովետական իրավագետ Վ. Մ. Չխիկվաձեն դեռ 1939 թ.։ «Խուլիգանությունը ենթա-

---

[1] Н. В Крыленко, Что такое хулиганство, Журнал «Рабочий суд», № 22, 1926. стр. 1361.

դրում է դիտավորյալ գործողություն»։ Խուլիգանության դեպքում դիտավորությունը կայանում է նրանում, որ մեղավորը գիտակցում է իր կատարած անպատկառ արարքը, որն արտահայտվում է հասարակության նկատմամբ արհամարհական վերաբերմունքի մեջ և, ցանկանում է այդ արարքը կատարել[2]։

Նույնանման կարծիք են հայտնել Բ. Ս. Ուտևսկին[3], Ե. Կ. Կորժուևը[4], Ի. Գ. Ֆիլանովսկին և Ի. Ի. Սոլոդկինը[5], Պ. Ի. Գրիշաևը[6], Վ. Դ. Մենշագինը[7] և այլ գիտնականներ։

Եթե բոլոր քրեագետները համամիտ են այն հարցում, որ սուբյեկտիվ կողմից խուլիգանությունը բնորոշվում է դիտավորությամբ, ապա նույնպիսի միասնական կարծիք չկա այն բանի բնորոշման հարցում, թե կարո՞ղ է արդյոք խուլիգանություն կատարվել անուղղակի (էվենտուալ) դիտավորությամբ, թե՞ միայն ուղղակի։

Սովետական շատ քրեագետներ գտնում են, որ խուլիգանությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն սուբյեկտիվ կողմից խուլիգանությունը բնորոշվում է միայն ուղղակի դիտավորությամբ. անուղղակի դիտավորությամբ կատարված գործողությունները չեն կարող որակվել իբրև խուլիգանություն։ Այս կարծիքին են հատկապես Վ. Մ. Չխիկվաձեն, Ի. Գ. Ֆիլանովսկին, Ի. Ի. Սոլոդկինը, Ե. Ա. Անդրուսենկոն, Ի. Ն. Դանշինը, Ա. Վ. Կուզնեցովը և ուրիշներ[8]։

Սակայն հայտնի է նաև այլ կարծիք, ըստ որի խուլիգանությունը կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ։ Այսպիսի դիրք են գրավում մասնավորապես Բ. Ս. Ուտևսկին, Վ. Դ. Մենշագինը, Ա. Գաբլինը, Ի. Կրունովսկին, Ե. Կ. Կորժուևը, Վ. Ա. Վլադիմիրովը, Ա. Ֆ. Գրիշանինը և ուրիշներ[9]։

Օրինակ, Վ. Դ. Մենշագինը գրում է. «...հնարավոր է խուլիգանություն կատարել նաև անուղղակի դիտավորությամբ, երբ մեղավորը գիտակցում է, որ ինքը խախտում է հասարակական կարգը և որ այդ խախտումը կապված է հասարակությանը բացահայտ հարգելու հետ և

---

2 Վ. Մ. Չխիկվաձե. Խուլիգանություն, ՀՍՍՀ Արդարադատության մինիստրության հրատարակչություն, Երևան, 1940, էջ 15։

3 Б. С. Утевский, Хулиганство, в кн.: «Советское уголовное право. Часть особенная», М., 1951, стр. 388.

4 Е. К. Коржуев, Ответственность за хулиганство по советскому уголовному праву. Автореферат кандидатской диссертации, М., 1955, стр. 4.

5 И. Г. Филановский, И. И. Солодкин, Борьба с хулиганством, М., 1957, стр. 10.

6 П. И. Гришаев, Преступления против порядка управления, общественной безопасности и общественного порядка, М., 1957, стр 64.

7 В. Д. Меньшагин, Хулиганство, в кн.: «Курс советского уголовного права Особенная часть», том 2, М., 1959, стр. 514.

8 Վ. Մ. Չխիկվաձե, Խուլիգանություն, ՀՍՍՀ Արդ. մինիստրութ. հրատ., Երևան, 1940; И. Г. Филановский, И. И. Солодкин, Борьба с хулиганством, М., Госюриздат, 1957, стр. 10; Е. А. Андрусенко, Понятие хулиганства и меры борьбы с ним. Автореферат кандидатской диссертации, Душанбе, 1963, стр. 11; Н. Н. Даньшин, Хулиганство и меры ликвидации его в СССР, Автореферат кандидатской диссертации, Харьков, 1965, А. В. Кузнецов, Преступления против общественного порядка, в кн.: «Советское уголовное право. Часть особенная», Госюриздат, 1965, стр. 384.

9 Б. С. Утевский, Советское уголовное право. Особенная часть, М., 1951, стр 94; В. Д. Меньшагин, Хулиганство, в кн.: «Курс советского уголовного права. Особенная часть», т. 2, М., 1959, стр. 514; Габлин, Усилить борьбу с хулиганством, «Социалистическая законность», 1952, № 8, стр. 36—37; Н. Круповский, К чему ведет отсутствие четкого определения понятия хулиганства, «Социалистическая законность», 1952, № 4, стр. 38; Е. К. Коржуев, Ответственность за хулиганство по советскому уголовному праву. Автореферат кандидатской диссертации, М., 1955, стр. 8; В. А. Владимиров, П. Ф. Гришапин, Преступления против общественной безопасности, общественного порядка и здоровья населения, М., 1962, стр. 9.

Ընկուզ չի ցանկանում, բայց գիտակցաբար թույլ է տալիս իր արարքով հասարակության բացահայտորեն չհարգելու հնարավորությունը»[10]։

Նույնանման կարծիք ունի նաև պրոֆ. Վ. Ֆ. Կիրիչենկոն։ Իբրև օրինակ նա բերում է Կոսովի վերաբերյալ քրեական գործը։ Վերջինս կինոթատրոնի սրահում հանդիպելով իր նախկին կնոջը, անվայել խոսքերով հայհոյել է նրան, ապա և ծեծել։ Վ. Ֆ. Կիրիչենկոն հանգում է այն եզրակացությանը, որ «նրա (Կոսովի) կատարած խուլիգանությունը սուբյեկտիվ կողմից բնորոշվում է անուղղակի դիտավորությամբ»[11]։

Այս կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում պարզելու, թե այդ տեսակետներից որն է իրավացի։ Մինչև այժմ մի շարք հեղինակներ, մասնավորապես Յու. Մ. Լիվշիցը[12], Օ. Ռուժելիտենը[13], Վ. Ս. Շիկունովը[14] զբաղվել են այդ հարցի քննարկմամբ և, մեր կարծիքով, միանգամայն իրավացիորեն պաշտպանել և հիմնավորել են առաջին տեսակետը։

Հատկապես ի՞նչն է հանգեցրել երկրորդ տեսակետի առաջացմանը՝ այս հարցը քննարկելու ժամանակ մեզ անհրաժեշտ է թվում նշել էվենտուալ, այսինքն անուղղակի դիտավորության էության վերաբերյալ ոչ ամենևին հստակ պատկերացման առկայությունը։ Այսպես, Վ. Դ. Մենագիր քրեական իրավունքի դասագրքում քննարկելով դիտավորությունը, հետևյալ կերպ է բնորոշում անուղղակի դիտավորությունը. «անուղղակի դիտավորության դեպքում անձնավորությունը կանխատեսում է հանրորեն վտանգավոր հետևանքները և գիտակցաբար թույլ է տալիս դրանց առաջացումը, ի տարբերություն ուղղակի դիտավորության, երբ անձնավորությունը ցանկանում է դրանց առաջացումը։ Ի տարբերություն ուղղակի դիտավորության, երբ անձնավորությունը ցանկանում է հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, անուղղակի դիտավորությունը բնորոշվում է նրանով, որ անձնավորությունը գիտակցաբար թույլ է տալիս այդպիսի հետևանքներ»[15]։

Էվենտուալ գիտավորության նման վերին աստիճանի ընդհանուր բնորոշման անբավարար լինելը չափազանց համոզիչ կերպով ցույց է տվել պրոֆ. Ա. Ն. Տրայնինը։ Նա գրում է. «Իսկապես և՞ օրենքը... և՞ տեսությունը էվենտուալ դիտավորությունը բնորոշում են իր արարքի հանցավոր հետևանքների նկատմամբ անձնավորության իբրև այնպիսի հոգեկան վերաբերմունք, որի դեպքում անձնավորությունը թեև չի ցանկանում, բայց գիտակցաբար թույլ է տալիս այդ հետևանքը...։ Սակայն այդ բանաձևը չի բացահայտում էվենտուալ դիտավորության բոլոր հատկանշական գծերը։ Դիմենք հետևյալ օրինակին։ Տեղի է ունենում տան վերանորոգում։ Թոկով տանիքից կախված խցիկում, տասներորդ հարկի բարձրության վրա աշխատում են երկու բանվոր՝ Իվանովը և Սեմյոնովը։ Քաղաքացի Ռոմանովը՝ Իվանովի թշնամին, որոշում է նրան սպանել և այդ նպատակով կտրում է խցիկը պահող թոկը. երկու բանվորներն էլ ընկնում են և ջախջախվելով մահանում։ Ռոմանովը չէր ցանկանում Սեմյոնովին սպանել, բայց նրա մահը գիտակցաբար թույլ է տվել։ Նման իրադրության ժամանակ էվենտուալ դիտավորության վերևում բերված բնորոշման հիման վրա պետք էր համարել, որ Ռոմանովը սպանել է Իվանովին ուղղակի դիտավորությամբ, իսկ Սեմյոնովին՝ էվենտուալ դիտավորությամբ։ Սակայն նման վճիռը խորապես սխալ է։ Էվենտուալ դիտավորությունը (և դրանումն է նրա առանձնահատկությունը) ենթադրում է, որ այն հետևանքը, որը, չցանկանալով, գիտակցաբար թույլ է տալիս մեղավոր անձնավորությունը, հենց էվենտուալ է, այսինքն՝ կարող է առաջանալ, բայց և կարող է չառաջանալ...։ Սեմյոնովը, որի մահը Ռոմանովը չի ցանկացել, բայց գիտակցաբար թույլ է տվել, չէր կարող Իվանովի հետ միասին չգոհվել։ Նրա մահը էվենտուալ չէ՝ այն անխուսափելի է։ Այդ պատճառով էլ ոչ միայն Իվանովի սպանությունը, այլև՝ Սեմյոնովի սպանությունը Ռոմանովը

---

[10] В. Д. Меньшагин, Хулиганство, в кн.: «Курс советского уголовного права. Особенная часть», том 2, М., 1959, стр. 514.

[11] В. Ф. Кириченко, Об усилении борьбы с хулиганством, «Знание», М., 1967, стр. 10.

[12] Ю. М. Лившиц, Общественная опасность хулиганства. Кандидатская диссертация, Тарту, 1964.

[13] О. Ружелите, Хулиганство и борьба с ним в Литовской ССР, в кн.: «Предупреждение преступлений», Вильнюс, 1961, стр. 95—96.

[14] В. С. Шикунов, Субъективная сторона хулиганства, в кн.: «Хулиганство и меры борьбы с ним», М., 1967, стр. 29—34.

[15] В. Д. Меньшагин, Советское уголовное право. Часть общая, Госюриздат, М., 1962, стр. 144

կատարել է ուղղակի դիտավորությամբ, քանի որ մեկի սպանությունը առանց մյուսի սպանության անիրագործելի էր։

Հետևապես, այնտեղ, որտեղ անհրաժեշտ է թեև անցանկալի, բայց միայն գիտակցաբար թույլատրելի հետևանքը, խոսք լինել չի կարող էվենտուալ դիտավորության մասին։

Այստեղից կարելի է եզրակացնել՝ մեղավոր անձը գործում է ուղղակի դիտավորությամբ ոչ միայն այն դեպքում, երբ ցանկանում է իր արարքի հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, այլև այն դեպքում, երբ թեև չի ցանկանում, բայց գիտակցում է, որ նման հանցավոր հետեանքների առաջացումը տվյալ կոնկրետ դեպքում անխուսափելի է։

Խուլիգանության հանցակազմի նկատմամբ կիրառելու դեպքում այդ ընդհանուր դրույթը իմաստն այն է, որ որոշակի արարք կատարելու ժամանակ մեղավոր անձնավորությունը գիտակցում է, որ իր արարքը անխուսափելիորեն կոպիտ կերպով խախտում է հասարակական կարգը և բացահայտորեն արհամարհում հասարակությանը, եթե նույնիսկ մեղավոր անձնավորությունը չի ցանկանում այդպիսի հանցավոր հետևանքների առաջացումը։ Հետապես, մեղավոր անձնավորության արարքը պետք է դիտվի ուղղակի դիտավորությամբ կատարված խուլիգանություն։

Այդ դրույթը մեր կարծիքով պետք է միավորի շարադրված երկու տեսակետները, վերացնի խուլիգանության դեպքում ուղղակի և անուղղակի դիտավորությունների կողմնակիցների միջև եղած հակասությունները։

Վերջիններս երբեմն իրենց կարծիքը հիմնավորելու համար վկայակոչում են Վախիդովի գործի վերաբերյալ ՍՍՀՄ Գերագույն դատարանի որոշումը։ Այդ գործի ֆաբուլան այսպիսին է. Վախիդովը կինոյում հանկարծակի հանդիպում է իր նախկին կնոջը՝ Վասնևային։ Կինը նրան հարցնում է, թե երբ է վճռելու իրենց ապահարզանի և երեխային պահելու համար ալիմենտ վճարելու հարցը։ Վախիդովի դուրը չի գալիս այդ ե. նա բազմաթիվ մարդկանց ներկայությամբ կնոջը հայհոյում է անվայել կերպով, նրան վայր գցում և ծեծում։ Վախիդովը դատապարտվեց դիտավորյալ կերպով թեթև մարմնական վնասվածք հասցնելու համար։ ՍՍՀՄ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան 1951 թ. մայիսի 7-ին քննելով այդ գործը. Վախիդովի արարքը որակել է որպես չարամիտ խուլիգանություն։

Վկայակոչելով ՍՍՀՄ Գերագույն դատարանի այդ որոշումը, նշված տեսակետի կողմնակիցները հայտարարում են. Վախիդովը չի ցանկացել կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը և արտահայտել իր արհամարհանքը հասարակությանը. նա միայն ցանկացել է «հաշիվ մաքրել» նախկին կնոջ հետ՝ հայրական պարտքի մասին իրեն հիշեցնելու համար։ Հետևապես. շարունակում են այդ հեղինակները, հասարակական կարգը խախտվել է և հասարակության նկատմամբ բացահայտ արհամարհանք է արտահայտվել անուղղակի դիտավորությամբ։ Քանի որ հայտնի է դիտավորության միայն երկու ձև, նշանակում է Վախիդովը այդ արարքը կատարել է անուղղակի դիտավորությամբ։ Քանի որ ՍՍՀՄ Գերագույն դատարանը գտել է. որ Վախիդովի արարքում խուլիգանության հանցակազմ դոյություն ունի. պետք է հետևցնել. որ խուլիգանություն կարող է կատարվել նաև անուղղակի դիտավորությամբ։

Եթե ավելի մանրակրկիտ վերլուծենք այս օրինակը. կարող ենք նկատել. որ այն դիտավորությունը, որը նշված հեղինակները համարում են անուղղակի. իրականում ուղղակի է. «հաշվեհարդար» կատարելով կնոջ նկատմամբ. Վախիդովը թեև չէր ցանկանում. բայց գիտակցում էր. որ իր գործողություններով՝ անվայել հայհոյանքով և կնոջը ծեծելով նա անխուսափելիորեն կոպիտ կերպով խախտում է հասարակական կարգը և արտահայտում իր արհամարհանքը հասարակությանը։ Ավելին. այդպիսի հետևանքները նրան հարկավոր էին, քանի որ այլ կերպ նա չէր կարող տվյալ հանգամանքներում «հաշիվ տեսնել» կնոջ հետ։

Ամբողջ շարադրվածը թույլ է տալիս մեզ հանգելու այն եզրակացության. որ ճշմարտացի է այն տեսակետը, ըստ որի խուլիգանության հանցակազմը սուբյեկտիվ կողմից բնորոշվում միայն ուղղակի դիտավորությամբ։

Խուլիգանության, ինչպես և յուրաքանչյուր դիտավորյալ հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշների թվին են վերաբերում հանցագործության մոտիվը և նպատակը։

Ա. Ն. Տրայնին հետազոտելով հանցակազմի տարրերը, այն հետևությանն է հանգել. որ «սուբյեկտիվ կողմը բնորոշող հանցակազմի տարրերը զգալիորեն սուղ են նկարագրված»

---

16 А. Н. Трайнин, Общее учение о составе преступления, Госюриздат. М. 1957. стр. 215.

օրենքի կողմից. դրանք ըստ էության էլ զգալիորեն փոքրաթիվ են՝ պարտադիրը—մեկ (դիտավորություն կամ անզգուշություն), ֆակուլտատիվը—մի քիչ ավելի։ Գիտակցաբար կատարված հանցագործությունների սուբյեկտիվ կողմը բնորոշող ֆակուլտատիվ տարրերի մեջ գլխավոր դեր են խաղում կատարված հանցագործության մոտիվը և նպատակը»[17]։ Այստեղ, ինչպես մեզ թվում է, անհրաժեշտ է հենց սկզբից վերապահել, որ դիտավորյալ կատարված հանցագործության հանցակազմի սուբյեկտիվ կողմի համար մոտիվը և նպատակը ոչ թե ֆակուլտատիվ, այլ պարտադիր հատկանիշներ են, քանի որ դիտավորությունը անիմաստ է առանց մոտիվի և նպատակի։

Մենք այդ երկու հատկանիշները պարտադիր ենք համարում, թեև քրեական օրենքը միշտ չէ, որ մատնացույց է անում հանցագործության մոտիվը և նպատակը։ Օրինակ, քաղաքացիների անձնական ունեցվածքի հափշտակման նպատակը օտարի ունեցվածքին տիրանալն է, սակայն քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի դիսպոզիցիայում, որը գողության համար պատասխանատվություն է նախատեսում, չի հիշատակվում գողության նպատակի մասին։ Սպեկուլյացիայի նպատակը շահ ստանալն է և այդ մասին ուղղակի նշվում է քր. օրենսգրքի 156-րդ հոդվածի դիսպոզիցիայում՝ «Շահ ստանալու նպատակով ապրանքների, կամ այլ առարկաների գնելն ու վերավաճառելը». քր. օրենսգրքի 99-րդ հոդվածի 2-րդ կետն ուղղակիորեն նշում է դիտավորյալ սպանության այնպիսի մոտիվ, ինչպիսին է խուլիգանական դրդումները։

Խուլիգանությունն այն դիտավորյալ հանցագործություններից է, որոնց նպատակը և մոտիվը ցույց չեն տրված օրենքի գիսպոզիցիայում։ Բայց դրանից ամենևին չի հետևում, թե խուլիգանությունը մոտիվ և նպատակ չունեցող հանցագործություն է (ինչպես պնդում են Ա. Ա. Ժիժիլենկոն, Ի. Վ. Բորոդինը և մի քանի այլ հեղինակներ)[18]։

Իսկական պրակտիկայի տեսական վերլուծությունը և ուսումնասիրությունը հերքում են առանց մոտիվի և նպատակի դիտավորյալ հանցագործությունների, հատկապես խուլիգանության գոյության հնարավորության վերաբերյալ կարծիքը։ Մոտիվը և նպատակը, ինչպես ցույց է տալիս այդ ուսումնասիրությունը, քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն են. ավելին, առանց մոտիվի և նպատակի խուլիգանական արարքներ չեն կատարվում։

Խուլիգանությունը առանց մոտիվի և նպատակի հանցագործություն համարող քրեագետների սխալը մասամբ բացատրվում է այն բանով, որ հաճախ խուլիգանության մոտիվը և նպատակը այնքան անհեթեթ, թեթևամիտ և վաղանցիկ են թվում, որ դժվար է լինում դրանք բացահայտել և միշտ չէ, որ կարելի է հստակորեն որոշել։

Սովետական քրեագետների գերակշիռ մեծամասնությունը միանգամայն հիմնավոր կերպով պնդում է, որ մոտիվը և նպատակը հանդիսանում են քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշները։

Այսպես, Պ. Ս. Մատիշևսկին գրում է՝ «Խուլիգանության սուբյեկտիվ կողմից պարտադիր հատկանիշներն են մեղավոր անձնավորության գործողությունների մոտիվը և նպատակը...։ Անպատկառ գործողությունը և նպատակը խուլիգանության ոչ միայն պարտադիր հատկանիշներ են, այլև հիմնական չափանիշներ, որոնք թույլ են տալիս խուլիգանությունը սահմանազատել նրան հարակից այլ հանցագործություններից»[19]։

Ի. Ն. Դանշինը, որը, մեր կարծիքով, ավելի խորը և բազմակողմանիորեն է հետազոտել խուլիգանության մոտիվի վերաբերյալ հարցը, գրում է՝ «Խուլիգանությունը այն հանցագործությունների հանցակազմին է վերաբերում, որոնցում մոտիվը հանդիսանում է պարտադիր հատկանիշներից մեկը։ ՌՍՖՍՀ քր. օրենսգրքի 206-րդ հոդվածով պահանջվող մոտիվի բացակայության դեպքում մեղավոր անձնավորության գործողությունները չեն կարող որակվել որպես խուլիգանություն»[20]։

---

[17] А. Н. Трайнин, Цитируемая работа, стр. 221.

[18] А. А Жижиленко, Преступления против личности, М.—Л., Госиздат, 1927, стр. 131; С. Бородин, Некоторые вопросы квалификации умышленных убийств, «Советская юстиция», 1960, № 5, стр. 15.

[19] П. С. Матышевский, Ответственность за преступления против общественной безопасности, общественного порядка и здоровья населения, Госюриздат, М., 1964, стр. 80—81.

[20] И. Н. Даньшин, О мотивах хулиганства, в кн.: «Известия высших учебных заведений Правоведение», изд. ЛГУ, 1965, стр. 170.

Պաշտպանելով այդ նույն դիրքորոշումը, Ցու. Մ. Լիվշիցը միանգամայն իրավացիորեն նշում է, որ ներկայումս, խուլիգանությունը իբրև առանց մոտիվի հանցագործություն դիտելը, լիովին մերժված է սովետական քրեագետների կողմից[21]։

Տասնյակ տարիներ իրավաբանական գրականության մեջ վեճ էր գնում ոչ միայն այն հարցի վերաբերյալ, թե մոտիվը և նպատակը արդյո՞ք հանդիսանում են քննարկվող հանցակազմի հատկանիշներ, այլև այն մասին, թե որոնք են խուլիգանության մոտիվն ու նպատակը։

Նախքան վերջին հարցին պատասխանելը, մենք նպատակահարմար ենք գտնում փորձել խուլիգանության մոտիվի և նպատակի բնորոշումը տալ։

Խուլիգանության մոտիվի տակ, մեր կարծիքով, պետք է հասկանալ ներքին այն մղումները, որոնք մեղավոր անձնավորությանը հրում են դեպի այնպիսի գործողությունների կատարում, որոնք կոպիտ կերպով խախտում են հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտում հասարակության նկատմամբ։

Իսկ խուլիգանության նպատակի տակ պետք է հասկանալ այն վերջնական արդյունքը, որին ցանկանում է հասնել մեղավոր անձնավորությունը՝ խուլիգանական մոտիվների ազդեցության տակ։

Միութենական հանրապետությունների ներկայումս գործող քրեական օրենսգրքերի ընդունումից առաջ սովետական իրավագետների գերակշիռ մեծամասնությունը խուլիգանության միակ մոտիվ էր համարում անպատկառությունը։ Այսպես, Վ. Մ. Չխիկվաձեն դեռ 1939 թ. նշում էր, որ անպատկառությունը խուլիգանության միակ մոտիվն է[22]։ Այդպիսի տեսակետ ունեին նաև Մ. Ի. Բաժանովը և Վ. Ի. Տկաչենկոն, 1959 թ. լույս տեսած սովետական քրեական իրավունքի դասագրքի հեղինակները և սովետական այլ քրեագետները[23]։

Այդպիսի սխալ դիրքը մասամբ բացատրվում էր նրանով, որ խուլիգանության համար պատասխանատվություն նախատեսող հոդվածը այդ հանցագործությունը բնորոշում էր իբրև անպատկառ գործողություններ։ Սրա հիման վրա էլ դատական պրակտիկան հաճախ անպատկառությունը դիտում էր որպես խուլիգանության միակ մոտիվ։

Ներկայումս գործող քրեական օրենսգրքերի ընդունումից հետո այդ կարծիքը դարձավ անհիմն, քանի որ բոլոր միութենական հանրապետությունների քրեական օրենսգրքերը, բացի Հայկական ՍՍՀ քր. օրենսգրքից, խուլիգանությունը չէին դիտում իբրև անպատկառ արարք։ Չնայած դրան, մի քանի քրեագետներ շարունակում էին պնդել, որ անպատկառությունը խուլիգանության միակ մոտիվն է։

Օրինակ, Պ. Ս. Մատիշևսկին 1964 թ. գրում էր՝ «խուլիգանական արարքը ելնում է անպատկառության մոտիվներից»[24]։

Անպատկառությունը իբրև խուլիգանության միակ մոտիվ են նշում նաև ՌՍՖՍՀ քրեական օրենսգրքի մեկնաբանությունների հեղինակները։ «Ուղղակի դիտավորությամբ կատարված խուլիգանության համար,— գրում են նրանք,— բնորոշ է հասարակական կարգի խախտման համար նշմարելի մոտիվի բացակայությունը, նման դեպքում հանցագործի արարքն ունի չարամիտ անպատկառության բնույթ, որն արտահայտվում է հանրորեն վտանգավոր գործողություններում»[25]։ Այդպիսի միտք է արտահայտել նաև Ե. Ա. Անդրուսենկոն[26]։

Ինչպես հայտնի է, անպատկառության տակ սովորաբար հասկացվում է «զվարճանալու», «չարաճճելու», «ուրախանալու», «ձեռ առնելու», «մեկի վրա ծիծաղելու» ձգտումը։

---

21 Ю. М. Лившиц, Общественная опасность хулиганства. Кандидатская диссертация, Тарту, 1964.

22 В. М. Чхиквадзе, Хулиганство, Юриздат, М., 1939, стр. 10.

23 М. И. Бажанов, В. И. Ткаченко, Квалификация хулиганства по советскому уголовному праву, «Советское государство и право». 1958, № 6, стр. 134. «Советское уголовное право. Часть особенная», Изд. ЛГУ, 1959, стр. 355.

24 П. С. Матышевский, Ответственность за преступления против общественной безопасности, общественного порядка и здоровья населения, Госюриздат, 1964, стр. 80.

25 «Научно-практический комментарий Уголовного кодекса РСФСР», Госюриздат, М., 1964, стр. 439.

26 Е. А. Андрусенко, Понятие хулиганства и меры борьбы с ним. Кандидатская диссертация, Душанбе, 1963, стр. 11.

Այն կարծիքը, թե խուլիգանության մոտիվ կարող է լինել միայն անպատկառությունը, նույնիսկ, եթե այն արտահայտվում է այսպես բազմատեսակ, նշանակում է, մեր կարծիքով, նվազեցնել խուլիգանության հանրորեն վտանգավորության աստիճանը, հնարավոր դարձնել չնկատելու ավելի վտանգավոր մոտիվներ։ Այդ կապակցությամբ տեղին է հիշել Գ. Զ. Անաշկինի ակնարկը՝ «հաճախ խուլիգանների վայրենի արարքը... գիտվում է իբրև անմեղ «անպատկառություն», «ընտանեկան գործ», «կտրիճություն»-։

Ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկայի ուսումնասիրությունը, անպատկառությունը խուլիգանական արարքի միակ մոտիվը չէ։ Այդ հանցանքի մոտիվ կարող են լինել վրեժը, խանգը և այլ անձնական մղումներ՝ հասարակության հանդեպ բացահայտ արհամարհանք դրսևորելու նպատակի առկայությամբ հանդերձ։

Ի. Ն. Դանշինը հետազոտելով խուլիգանության մոտիվները, հանգել է այն եզրակացության, որ «անպատկառության հետ մեկտեղ, լինում են նաև այնպիսի մոտիվներ, ինչպես շրջապատը, հասարակության նկատմամբ իր բացահայտ արհամարհանքը ցույց տալու, հասարակական կարգին իր վարքը հակադրելու, մարդու անձնական արժանապատվությունը և նրա աշխատանքը, բաղաքացիների օրենքով պաշտպանվող այլ բարիքները, շահերը, սոցիալիստական համակեցության կանոնները արհամարհելու ձգտումը, անկարգություն, պոռոտախոսություն, կոպիտ ուժ, հարբածի կտրիճություն, դաժանություն ցուցադրելու, իր «ուժը», «անվեհերությունը» ցույց տալու, անպաշտպաններին ծաղրելու, այլ քաղաքացիների նկատմամբ իր «գերազանցությունը», «իր բնույթը» դրսևորելու, հասարակական կարգապահության դեմ մանրբուրժուական բողոք արտահայտելու ձգտումը և նման այլ ստոր մղումներ»-[8]։

Վերապահումով համաձայնվելով այդ թվարկմանը, պետք է մատնանշել, որ Ի. Ն. Դանինի թվարկած մի քանի մոտիվներ ըստ էության ընդգրկվում են անպատկառության հասկացության մեջ և դրանք չի կարելի դիտել որպես ինքնուրույն մոտիվներ։ Օրինակ, «անպաշտպաններին ծաղրելը», այլ քաղաքացիների նկատմամբ իր «գերազանցությունը» ցուցադրելը, «իր բնույթը դրսևորելը» և այլն՝ սրանք այնպիսի հոգեկան մղումներ են, որոնք ընդգրկվում են անպատկառության հասկացողության մեջ։

«Անպատկառ մղումները,— գրում է Վ. Ս. Շիկունովը,— խուլիգանության հաճախ հանդիպող, բայց միակ մոտիվը չեն։ Հասարակության հանդեպ բացահայտ արհամարհանք արտահայտելու ցանկությունը կարող է առաջանալ պոռոտախոսությունից, հարբածի «կտրիճությունից», մարդկանց վրա չարացած լինելուց և այլն»[29]։

Այսպիսով տեսնում ենք, որ գրեթե բոլոր քրեագետները անպատկառությունը համարում են կամ խուլիգանության միակ մոտիվը, կամ այդ հանցագործության մոտիվներից մեկը, բայց ոչ միակը։

Մեր կարծիքով, խուլիգանության կոնկրետ մոտիվները թվարկելու ժամանակ գրականության մեջ թույլ է տրվում որոշ սխալ։ Մոտիվը հոգեկան երևույթ է, իսկ անպատկառությունը՝ գործողություն։ Հետևապես, անպատկառությունը ինքնըստինքյան չի կարող դիտվել իբրև հոգեկան մղում, ինչպիսին է հանցագործության մոտիվը։ Այդ պատճառով էլ իրավացի է Վ. Ս. Շիկունովը, երբ գրում է՝ «Մի քանի հեղինակներ գտնում են, թե խուլիգանության մոտիվը անպատկառությունն է։ Սակայն, ավելի ստույգ կլիներ խոսել անպատկառության ձգտումների մասին։ Քանի որ անպատկառության ձգտումը և ոչ թե անպատկառությունը (արտաքուստ դրսևորված ավարտված պրոցես) կարելի է դասել հոգեկան գործունեության շարքին»[30]։

Այն բոլոր մոտիվները, որոնց ազդեցության ներքո կատարվում են խուլիգանական արարքներ, իրավաբանական գրականության մեջ, ինչպես հայտնի է, ընդունված է անվանել խուլիգանական մոտիվներ կամ խուլիգանական մղումներ։

Պետք է նշել, որ խուլիգանական արարքը ամենևին էլ ոչ միշտ է սկիզբ առնում խուլիգանական մոտիվներից կամ մղումներից, ինչպես և խուլիգանական մոտիվը միշտ չէ, որ արտահայտվում է «մաքուր» ձևով, առանձին, անկախ ուրիշ, ոչ-խուլիգանական մղումներից, որովհետև, ինչպես պրակտիկան է ցույց տալիս, հաճախ հակաօրինական արարքը սկսվում է այլ-

---

[27] Г. З. Анашкин, До конца искоренить это зло, «Правда» 14 июля 1961 г.

[28] И. Н. Даньшин, О мотивах хулиганства. «Правоведение», 1965, № 2, стр. 172.

[29] В. М. Шикунов, Субъективная сторона хулиганства, в кн.: «Хулиганство и меры борьбы с ним», «Юридическая литература». М., 1967, стр. 26.

[30] Там же, стр. 25—26.

ոչ-խուլիգանական մղումներից, իսկ այնուհետև իրենց բնույթով և բովանդակությամբ տարբեր գործոնների ազդեցության տակ, այդ մոտիվները վերաճում են խուլիգանական մղումների, ըստ որում այնպիսի ձևով, որ խուլիգանական մոտիվները սկսում են գերակշռել սկզբնական մոտիվների նկատմամբ, կլանում են դրանք, հանցագործին մղելով կատարելու այնպիսի գործողություններ, որոնցով կոպիտ կերպով խախտվում է հասարակական կարգը և միաժամանակ դրսևորվում է բացահայտ արհամարհանք հասարակության նկատմամբ։

Այսպես, ոմն Կիրակոսյան, խանութում նկատելով, որ քաղաքացուհի Ի.-ի պայուսակը բաց է և այնտեղ դրամ կա, մոտենում է նրան, որ աննկատելիորեն հանի դրամը պայուսակից։ Այդ պահին Ի.-ն շեշտակիորեն շրջվում է և շարժվում դեպի դուռը։ Կիրակոսյանը սկսում է հետևել Ի.-ին, հույս ունենալով պատեհ մոմենտ գտնել և դրամը հանել պայուսակից։ Ի.-ն փողոց է դուրս գալիս, մոտենում կանգառին և տրամվայ նստում, Կիրակոսյանն էլ նրա ետևից։ Տրամվայում շատ ուղևորներ կային։ Այնտեղ Ի.-ի և Կիրակոսյանի միջև երկու կին էին կանգնած։ Կիրակոսյանը կոպիտ կերպով հրում է նրանց, որպեսզի մոտենա Ի.-ին։ Այդ երկու կանայք զայրանում են և կարծելով, թե նա հարբած է, իրենց հերթին հրում են նրան։ Կիրակոսյանը նրանցից մեկի դեմքին հարվածում է և անվայել խոսքերով հայհոյում։ Ուղևորներից մեկը փորձում է նրան կարգի հրավիրել, պահանջելով, որ նա դադարեցնի խուլիգանությունը։ Կիրակոսյանը սկսում է ծեծել այդ ուղևորին, միաժամանակ հայհոյելով նրան։ Երկու ուրիշ ուղևորներ վերջապես նրան իջեցնում են տրամվայից և տանում միլիցիայի բաժին։ Կիրակոսյանը պատասխանատվության կանչվեց և խուլիգանության համար դատապարտվեց։

Ինչպես տեսնում ենք, Կիրակոսյանի սկզբնական արարքի մոտիվը շահն է եղել։ Հետո, երբ ուղևորները նրան խանգարել են գողություն անել, նրա մոտ առաջացել է նաև խուլիգանական մոտիվ, ընդ որում վերջինս իշխել է մյուս շարժառիթների նկատմամբ և ըստ էության դուրս է մղել սկզբնական մոտիվը։

Մենք ընդգծում ենք «իշխել» բառը այն պատճառով, որովհետև, ինչպես իրավացիորեն նշվում է գրականության մեջ, մի քանի մոտիվների ազդեցության տակ կատարված հանցագործությունը ճիշտ որակելու համար անհրաժեշտ է որոշել մոտիվների միջև եղած հարաբերակցությունը և այն հաշվով, թե որ մոտիվն է գերիշխում, տիրապետում, որակել նաև կատարվածը[31]։

Խուլիգանական մոտիվներին հատուկ են մի շարք սպեցիֆիկ առանձնահատկություններ։ Ի. Ն. Դանշինը թվարկում է չորս այդպիսի առանձնահատկություն։ Առաջին առանձնահատկությունը՝ խուլիգանական մոտիվների ձևավորման և գործողության արագընթացությունն է։ Խուլիգանը օրինազանցություն է կատարում անսպասելիորեն, «հանկարծ», առանց որևէ տևական հոգեբանական նախապատրաստության։

Խուլիգանական մոտիվի երկրորդ առանձնահատկությունը նա համարում է առիթի բացահայտ անբավարար լինելը և նրա անհամապատասխանությունը կատարված գործողությանը[32]։ Խուլիգանական գործողությունները մեծ մասամբ կատարվում են աննշան առիթի դեպքում կամ առանց որևէ առիթի։ Խուլիգանը սպառնում է յուրաքանչյուրին և ամենքին։ Խուլիգանի զոհը պատահական է։ Նա այդ զոհի հետ նախկինում ընդհանուր ոչինչ չի ունեցել։ Փոքրիկ գրգռումն իսկ (օրինակ, տուժողը կրակ չի տվել ծխախոտը վառելու) պայմանավորում է ամենաստոր արարք կատարելը։ Այդ իմաստով խուլիգանական արարքի մասին կարելի է խոսել իբրև հանցավորի ոչ ագեկվատ պատասխան գործողության մասին։

Երրորդ հատկանիշը գործողության մոտիվացման հարաբերական թեթևակշիռ լինելն է։ Հանրահայտ է, որ ցանկացած կամային գործողություն՝ արարքի կատարման «թեր» և «դեմ» մոտիվների պայքարի արդյունք է։ Որքան ծանրակշիռ են «դեմ» մոտիվները, այնքան նշանակալի, լուրջ և լիակշիռ պետք է լինեն «թեր» մոտիվները, որպեսզի արարքը կատարվի։ Այլ բան ենք նկատում խուլիգանների մոտ։ Կամքի ձևավորման պրոցեսում մենք նկատում ենք «թեր» մոտիվների համեմատական թեթևակշռություն, որոնք համենայն դեպս բավարար են, որպեսզի գերակշռեն «դեմ» մոտիվներին։ Ըստ որում «դեմ» մոտիվները տառապում են որոշակի թուլությամբ։ Խուլիգանը գիտակցում է իր հարուցած վնասակար հետևանքները, բայց դրանց մասին ունեցած պատկերացումները նրա մեջ չեն առաջացնում այնպիսի զգացում, որը կարողանար դանդաղեցնել կամային պրոցեսի զարգացումը։

---

31 А. В. Кузнецов, Хулиганство и борьба с ним Госюриздат, 1962, стр. 37.

32 Խուլիգանական շարժառիթների այդ առանձնահատկությունը մի քանի քրեագետներ բնորոշում են «մոտիվի աննշանություն» տերմինով։

Չորրորդ առանձնահատկությունը նա համարում է խուլիգանական մղումների դրսևորման հատուկ երևութականությունը, բացահայտությունը։ Խուլիգանական մոտիվներն արտաքուստ հստակորեն արտահայտված են, նրանք «աղաղակում են», «աչքի դարնում»։

Խուլիգանական մոտիվների թվարկված սպեցիֆիկ առանձնահատկությունները՝ արագընթացությունը, աննշան լինելը, մոտիվացման թեթևակշռությունը և ակներևությունը, եզրակացնում է Ի. Ն. Դանշինը, այլ փաստական հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս գործնականորեն որոշել այդ մոտիվի առկայությունը կոնկրետ օրինախախտումների մեջ[33]։

Խուլիգանական արարք կատարելով, մեղավոր անձնավորությունը ձգտում է որոշակի նպատակի հասնել, ինչպես արտահայտվում է Յու. Մ. Լիվշիցը։ Խուլիգանական արարքի մեջ գոյություն ունի իր նպատակասլացությունը։

Ինչպիսի՞ն է այդ նպատակը կամ նպատակասլացությունը։ Այդ հարցին քրեագետները տարբեր պատասխան են տալիս, երբեմն էլ ուղղակի հակադիր պատասխան։ Նրանց մեծամասնությունը համամիտ է այն կարծիքին, որ խուլիգանական արարք կատարելու ժամանակ նպատակը հասարակության հանդեպ բացահայտ արհամարհանք դրսևորելն է։ Այսպես, Պ. Ս. Մատիշևսկին գրում է՝ «Խուլիգանություն կատարելու ժամանակ նպատակը կայանում է նրանում, որպեսզի դրսևորվի բացահայտ արհամարհանք հասարակության նկատմամբ»[34]։

Ա. Վ. Կուզնեցովը այլ կարծիքի է. նա գրում է, որ խուլիգանության մոտիվ պետք է համարել մեղավոր անձնավորության ձգտումը՝ ցույց տալ իր արհամարհանքը հասարակության հանդեպ, իսկ նպատակը այդպիսի արհամարհանք վկայող անպատկառ արարքի կատարումը[35]։ Այդպիսի կարծիք ունեն նաև Ի. Գ. Ֆիլոնովսկին, Ի. Ի. Սոլոդկինը[36]։ «Մեղսունակ անձնավորության կատարած ամեն մի արարքը,— գրում է Վ. Ս. Շիկունովը,— ունի ինչ-որ նպատակ։ Սակայն ի տարբերություն մի քանի այլ հանցագործությունների, խուլիգանության ժամանակ արարքի կատարումն ինքը նպատակ է և ոչ թե հետագայում ինչ-որ նպատակի հասնելու միջոց»[37]։

Քանի որ խուլիգանական է հանդիսանում միայն այն արարքը, որը կոպիտ կերպով խախտում է հասարակական կարգը և բացահայտ արհամարհանք է արտահայտում հասարակության նկատմամբ, ապա Վ. Ս. Շիկունովի կարծիքի էությունը կայանում է նրանում, որ խուլիգանության նպատակը այնպիսի արարք կատարելն է, որը կոպիտ կերպով խախտում է հասարակական կարգը և դրա հետ մեկտեղ բացահայտ արհամարհանք արտահայտում հասարակության նկատմամբ։

Ինչպես հայտնի է, դիտավորյալ հանցագործությունների ժամանակ ինքը արարքը չի կարող նպատակ լինել. այդ արարքը հանդիսանում է որոշակի նպատակի հասնելու միայն միջոց։ Չժխտելով այդ դիրքորոշումը, Վ. Ս. Շիկունովը բացառություն է անում խուլիգանության համար, ոչնչով չհիմնավորելով այն։

Բացի այդ, չպետք է մոռանալ, որ հանցագործության նպատակը, ինչպես և մոտիվը, հոգեկան երևույթ է, իսկ վերջինս չի կարող գործողությունների մեջ արտահայտվել։ Այդ պատճառով էլ մեզ թվում է, որ Վ. Ս. Շիկունովը և մյուս քրեագետները, որոնք պնդում են, թե խուլիգանության նպատակը առանձին գործողություններ կատարելն է, իրավացի չեն։ Ճիշտ է այն քրեագետների տեսակետը, որոնք խուլիգանության նպատակը համարում են հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտելու ձգտումը։

Պետք է նշել, որ խուլիգանության յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ է պարզել, որոշել նրա մոտիվն ու նպատակը։ Այդ կանոնի անտեսումը կարող է դատական սխալների հասցնել, քանի որ հաճախ կատարված գործողությունների հենց միայն մոտիվն ու նպատակը հնարավորություն են տալիս ճիշտ որակել կատարվածը և որոշել կատարվածի ու կատարողի անհրաժեշտ վտանգավորության աստիճանը։

---

[33] И. Н. Даньшин, О мотивах хулиганства. «Правоведение», 1965, № 2, стр. 174.

[34] П. С. Матышевский, Ответственность за преступления против общественной безопасности, общественного порядка и здоровья населения, Юриздат, М., 1964, стр. 81

[35] А. В. Кузнецов, Хулиганство и борьба с ним. Госюриздат, М., 1962.

[36] И. Г. Филоновский, И. И. Солодкин, Борьба с хулиганством, Госюриздат, М., 1957.

[37] В. С. Шикунов, Субъективная сторона хулиганства. В. кн.: «Хулиганство и меры борьбы с ним». Юриздат, М., 1967, стр

Այսպիսով, խուլիգանության հանցակազմի սուբյեկտիվ կողմի համար, ըստ մեզ, բնորոշ է մեղքի ուղղակի ձևը։ Այն քրեագետների կարծիքը, ըստ որի խուլիգանությունը կարող է կատարվել նաև անուղղակի դիտավորությամբ, հետևանք է մեղքի ուղղակի դիտավորության հատկանիշների ոչ ճիշտ մեկնաբանման։ Այդ կարծիքը դատաքննչական մարմինների պրակտիկ աշխատանքում կարող է հանգեցնի սոցիալիստական օրինականության խախտման, որովհետև հասարակական կարգի խախտման ամեն մի դեպք, անկախ սուբյեկտի մոտիվից ու նպատակից, կդիտվի որպես խուլիգանություն՝ դրանից բխող բոլոր հետևանքներով։

Սոցիալիստական օրինականության կոպիտ խախտումների կարող է հանգեցնել նաև այն սխալ կարծիքը, ըստ որի խուլիգանությունը կատարվում է միայն անպատկառ դրդումներով։ Այդ կարծիքը դատաքննչական մարմինների պրակտիկ աշխատանքում կիրառվելու դեպքում կունենա այն միանգամայն վնասակար հետևանքը, որ այլ ստոր դրդումներով կատարված հասարակական կարգի կոպիտ խախտման հարյուրավոր և հազարավոր փաստերը չեն որակվի որպես խուլիգանություն և հետևապես հանցավորները կմնան անպատիժ։

СУБЪЕКТИВНАЯ СТОРОНА СОСТАВА ХУЛИГАНСТВА

Г. С. САРКИСОВ

Резюме

Для субъективной стороны состава хулиганства характерен, прежде всего, умысел вины. Как известно, умысел, как форма вины, бывает прямым и косвенным. Ряд советских криминалистов высказали мнение о том, что умысел при хулиганстве может быть и прямым и косвенным. Многие же криминалисты придерживаются иного мнения, согласно которому умысел при хулиганстве может быть только прямым. Мы солидарны с теми советскими криминалистами, по мнению которых хулиганство совершается с прямым умыслом.

Однако для состава хулиганства, умысел, как форма вины, не является единственным обязательным признаком. Им являются также мотив и цель; иначе говоря, нет хулиганских действий без мотива и цели.

Многие криминалисты придерживаются того мнения, что хулиганские действия совершаются единственным мотивом, каковым является озорство. Это мнение ошибочное, ибо озорство, в действительности, является одним, но вовсе не единственным мотивом хулиганства.

Все мотивы рассматриваемого состава в юридической литературе принято называть хулиганским мотивом.

При расследовании каждого уголовного дела о хулиганстве орган дознания, следователь, суд должны выяснить мотив и цель. Это необходимо как для правильной квалификации вины, так и для правильного определения вида и меры наказания.